

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԶԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄԱԿԱՆԴԻՐՆԵՐ

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Եվրոպական կառույցներին ինտեգրվելը Հայաստանի համար եղել է և շարունակում է մնալ որպես արտաքին քաղաքականության զերակա ուղղություններից մեկը: Սա ակնառու կերպով արտացղվում է Եվրամիության /ԵՄ, EU/, Եվրոխորհրդի /ԵԽ, EC/, Հյուսիսարևանյան դաշինքի (North Atlantic Treaty Organization, NATO) և այլ եվրոպական կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի երկողմանի հարաբերություններում:

ԵՄ հետ Հայաստանի համագործակցությունը սկիզբ առավ հենց անկախությունից հետո՝ ԱՊՀ երկրներին տրվող տեխնիկական օգնության (Technical Assistance to the Commonwealth of Independent States, TACIS) ծրագրի և ԵՄ երկրների հետ Հայաստանի երկողմանի հարաբերությունների զարգացման շրջանակներում: Հարկ է նշել, որ ԵՄ երկրների շրջանակներում Հայաստանը բավական սերտ կապեր ունի ներկայիս ԵՄ կիմնադիր երկրներից մեկի՝ Ֆրանսիայի, ինչտ որտեղ բնակվում է ամենամեծ թվով սփյուռքահայությունը Եվրոպայում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով Եվրոպան մեծ մարդկային կորուստների կրեց, առաջացավ տնտեսական ճգնաժամ ու քաղաքական անկայունություն: 1950թ. Ֆրանսիայի արտարին գործերի նախարար Ռոբերտ Շումանը առաջարկեց միավորել Արևմտյան Եվրոպայի ածուխ և պողպատ արտադրող ձեռնարկությունները: Բանակցությունների արդյունքում՝ 1951թ. ստեղծվեց Եվրոպայի ածխի և պողպատի համայնքը (ECSC), որն ուներ վեց անդամ՝ Բելգիա, Արևմտյան Գերմանիա, Լյուքսեմբուրգ, Ֆրանսիա, Իտալիա և Նիդեռլանդներ:

1957թ. վեց պետություններ կնքեցին Հռոմի համաձայնագիր՝ կիմնադրելով Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքը (EURATOM) և Եվրոպական տնտեսական համայնքը (EEC): Անդամ պետությունները որոշում կայացրին վերացնել միջյանց միջև առկա առևտությունը խոշընդուները և ձևավորել «ընդհանուր շուկա»: 1967թ. Եվրոպական երեք համայնքների ինստիտուտները միաձուլվեցին՝ ստեղծելով միասնական Հանձնաժողովը (Maastricht Treaty) և միասնական Նախարարների խորհրդությունը, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանը:

1992թ. կնքված Մասատրիխտի համաձայնագրով հաստատվեցին անդամ պետությունների կառավարությունների միջև համագործակցության նոր ձևեր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, պաշտպանությունը և արդարադատության ու ներքին գործերի ոլորտը: Առկա «համայնքային» համակարգին ավելացնելով միջկառավարական, համագործակցությունը՝ Մասատրիխտի համաձայնագիրը ստեղծեց Եվրոպական Միությունը՝ ԵՄ: ԵՄ անդամ պետությունները մշակել են միասնական և ընդհանուր քաղաքականություն տարբեր ոլորտների և ճյուղերի վերաբերյալ՝ գյուղատնտեսությունից մինչև մշակույթ, սպառողների իրավունքներից մինչև մրցակցություն, բնապահպանության ու էներգետիկայի ոլորտից մինչև տրանսպորտ ու առևտուր:

Անդամ պետությունների համար հեշտ առաջարկանք չեր առևտությունը վերացնելն ու միասնական շուկայի անցնելը, ինչն ապահովում էր ապրանքների, ծառայությունների, մարդկանց և կապիտալի ազատ տեղաշարժը:

1992թ. ԵՄ-ն որոշում կայացրեց Տնտեսական և արժութային միության (EMU) ստեղծման մասին, ինչը ենթադրում էր մեկ միասնական Եվրոպական արժույթի ներմուծում՝ Եվրոպական կենտրոնական բանկի կառավարման ներքո: Միասնական արժույթը՝ Եվրոն, իրականություն դարձավ 2002 թվականի հունվարի 1-ին, երբ Եվրո բղադրյամբները և մետաղադրամները փոխարինեցին ազգային արժույթը ԵՄ 15 երկրներից 12-ում (Բելգիա, Գերմանիա, Հունաստան, Իսպանիա, Ֆրանսիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Ավստրիա, Պորտուգալիա և Ֆինլանդիա):

ԵՄ-ն աստիճանաբար ընդլայնվում էր: Դանիան, Իտալիանիան և Միացյալ Թագավորությունը միացան ԵՄ-ին 1973թ.: Դրանց օրինակին հետևեցին Հունաստանը (1981), Իսպանիան ու Պորտուգալիան (1986), Ավստրիան, Ֆինլանդիան ու Չվեխիան (1995): 2004թ. մայիսին ԵՄ-ն ընդունեց տասը նոր անդամ պետություններ (Կիպրոս, Չեխիա, Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Մալթա, Լեհաստան, Ալբանիա և Ալբանիա): Բուլղարիան ու Ռումինիան միացել են ԵՄ 2007թ. հունվարի 1-ին, իսկ թեկնածու երկրների շարքում է Թուրքիան:

Նախքան Եվրամիությանն ինտեգրվելը՝ նոր անդամակցված Եվրոպական երկրներն անցել են երկար և դժվարին ճանապարհ: Լինելով թեկնածու երկրներ՝ դրանք պետք է ապահովեն որոշակի չափանիշների բավարարումը, այն է՝ կայուն ինստիտուտներ, որոնք երաշխավորում են ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, գործող շուկայական տնտեսություն, որը կարող է դիմակայել Միության ներսում առկա մրցակցային ճնշման ու շուկայական ուժերին, անդամության հետ կապված պարտավորությունները ստանձնելու կարողությունը՝ ներառյալ Միության նպատակներին սատարելը:

Թեև ԵՄ-ին անդամակցել գտտող բոլոր երկրների համար սահմանված չափանիշները նույնն էին, այնուամենայնիվ, յուրաքանչյուր թեկնածու երկիր ուներ իր առանձնահատկությունները՝ կապված տնտեսու-

թյան և ենթակառուցվածքների, քաղաքական իրավիճակի, մշակույթի հետ: Թեկնածու երկրների եվրոպիա-տեկրման գործընթացում կիրառվող մոտեցումները տարբերվում են միայնակից:

Այսպիսով, ԵՄ հիմնական պատմական փաստերը հետևյալն էն. 1948-ին ձևավորվեց BENELUX Մարսային միությունը, 1951թ.՝ Ածիսի և պողպատի Եվրոպական համայնք, 1957թ.՝ Եվրոպական տնտեսական համայնք (Հռոմի համաձայնագիր), 1967թ.՝ Եվրոպական համայնք, 1973թ.՝ Եվրոպական համայնքի ընդլայնում (Անգլիա, Իռլանդիա, Դանիա), 1991թ.՝ Եվրոպական Միության համաձայնագիրը (Մաստրիխիստի համաձայնագիր), 1997թ.՝ Ամստերդամի համաձայնագիրը, 2001թ.՝ Նիցցայի համաձայնագիրը, 2002թ.՝ Եվրոպական մուտքը, 2004թ.՝ ԵՄ ընդլայնում (10 անդամներ), 2007 ևս 2 երկիր:

Ըստ որում, մինչև եվրոյի համար գալը որպես Եվրոպական համայնքի հաշվարկային միավոր, օգտագործվում էր Երյուն: Վերջինս ստեղծվեց 1979թ. մարտի 13-ին՝ որպես ներքին հաշվարկային միավոր: Այն ուներ ISO 4217 ստանդարտի XEU արժույթի կոդը: 1999թ. հունվարի 1-ին 1 եվրո = 1 երյուն փոխարժեքով եվրոն (կոդ EUR) փոխարինեց երյունին: Ի տարրերություն երյունի եվրոն կանխիկ արժույթ է, սակայն ոչ բոլոր անդամ երկրներն են օգտագործում այն:

ԵՄ անդամ շատ պետություններ ջանքեր էին գործադրում՝ իրականացնելու Եվրոպական արժութային միավորին /ԵԱՀ/ միանալու պահանջները՝ ուղղունելով արժույթի սուբյեկտուր միավոր՝ Եվրոպա:

Այս պահանջները բավականին խիստ էին՝ երկրի սղաճի մակարդակը չպետք է գերազանցեր ԵՄ անդամ ամենացածր սղաճի մակարդակով երեք երկրների միջին սղաճի մակարդակի 1,5 տոկոսը, երկրի բյուջեի դեմքիցիտը չպետք է գերազանցեր համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3 տոկոսը, իսկ երկրի պետական պարտը չպետք է գերազանցեր ՀՆԱ 60 տոկոսը, երկրում երկարաժամկետ տոկոսադրույթը չի կարող 2 տոկոսից ավելի ցուցանիշով գերազանցել ամենացածր տոկոսադրույթով երեք անդամ երկրների տոկոսադրույթուների միջին ցուցանիշը, երկրի արժույթը չպետք է արժեզրկվեր որևէ այլ անդամ երկրի արժույթին կատարած՝ Արժույթային միուրյան ստեղծմանը նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում:

Եվրոն ընդունած երկրներն են Ավստրիան, Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իռլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Պորտուգալիան և Իսպանիան: Անգլիան, Շվեյչարն և Դանիան, թեև համապատասխանում են ԵԱՄ չափանիշներին, որոշեցին չմասնակցել: Հունաստանը հույս ուներ եվրոն ընդունել առաջին այլքի հետ, ասկայն չկարողացավ համապատասխանել չափանիշներին: 1999թ. հունվարի 1-ին, այսպես կոչված, Եվրոյի գոտու մասնակից 11 երկրները սկսեցին եվրոն օգտագործել հաշվապահական նպատակներով և դրամի էելեկտրոնային փոխանցումների համար՝ իրենց ազգային արժույթները կիրառելով մյուս նպատակներով: Հունաստանը եվրոն ընդունեց 2001թ. հունվարին՝ դառնալով Եվրոյի գոտու 12-րդ անդամը: 2002թ. ԵԿԲ-ն սկսեց եվրո անվանական մետաղադրամներ և թղթադրամներ թողարկել, և անդամ երկրների արժույթները դադարեցին օրինական գործարքային միջոց լինել: 2004թ. կազմակերպությանը միացած ԵՄ նոր անդամները պետք է պաշտոնապես եվրոն ընդունեն: Նոր անդամներից ունաճ՝ Կիպրոսը, Էստոնիան, Լիտվան և Սլովակիան, հայտարարեցին, որ անմիջապես քայլեր կծեռնարկեն եվրոն ընդունելու համար: Նրանց համար մասնակցությունը միասնական արժուքային գոտուն հնարավոր կդառնա միայն 2007-ից սկսած: Եվրոն ընդունելու համար նոր անդամները պետք է նախ համապատասխանեն ԵԱՄ չափանիշներին: Այնուհետև նրանք պետք է ապացուցեն, որ արժույթը կայուն կմնա հաջորդ երկու տարիների ընթացքում:

ԵՄ անդամակցությունը ընդհանուր առմամբ բարդ և ընդարձակ գործընթաց է: 1993թ. Եվրոպական Սիուրյան խորհուրդը Կոպենհագենում դրեց ներկայիս ընդլայնման գործընթացի հիմքը՝ հայտարարելով՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, որոնք ցանկանում են դառնալ Եվրոպական Սիուրյան անդամներ, կստանան այդ հնարավորությունը, և սահմանեց անդամակցության նախապայմանները, այսպես կոչված, Կոպենհագենյան շափանիշները: Վերջինիս շափանիշների շրջանակում անդամակցությունը հավակնորդ երկրից պահանջում է ապահովել ժողովրդավարության, օրենքի իշխանության, մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանության երաշխավոր հաստատությունների կայունություն՝ (բաղադրական շափանիշներ):

1999թ. Ամստերդամի համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելուց ի վեր այս պահանջները պահպանվել են որպես սահմանադրական չափանիշներ Եվրոպական Սիուրյան համաձայնագրում և ամրապնդվել են Եվրոպական Սիուրյան հիմնարար իրավունքների խարտիայում, որը հոչակվեց 2000թ. դեկտեմբերին՝ Նիցցայում կայացած Եվրոպական խորհրդի նիստում:

Տնտեսական շափանիշներն են՝ շուկայական տնտեսության առկայություն, ինչպես նաև կարողություն՝ դիմակայելու մրցակցության ճնշմանը և շուկայի ուժերին Սլովակիան ներսում։ Այս շափանիշները համապատասխանում են 1993թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած Մասատրիխստի համաձայնագրում ամրագրված տնտեսական քաղաքականության հիմնադրույժներին։ Բացի այդ, կարևոր է անդամակցության պարտավորությունների ստանձնման կարողություն՝ ներառյալ քաղաքական, տնտեսական և արժութային միության նպատակների իրականացումը*։

Իսկ այժմ կենտրոնանանք ԵՄ և Հայաստանի հարաբերություններին պատմական և, վերջիվերջո, ԵՄ անդամ դառնալու տեսանկյունից:

1989թ. Եվրոպական համայնքի և ԽՍՀՄ միջև կնքվեց Առևտրի, առևտրի և տնտեսական զարգացման պայմանագիրը: Այս պայմանագրով անուղղակի կերպով հիմք դրվեց ԵՄ-Հայաստան հարաբերություններին:

1992թ. Եվրոպական համայնքը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: ԵՄ-Հայաստան համագործակցությունը ծնունդ առավ 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո՝ TACIS ծրագրի շրջանակում: TACIS-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներին ուղղված ԵՄ/ԵՀԿ օժանդակությունը կազմակերպվել է 1994 թվականի մայիսի 2-ին:

* Մանրամասն տես՝ «Եվրոպական մրցույթ» համապարփակ նկարագիր», ձեռնարկ, Երևան, 2006թ.:

կության հիմնական գործիքն էր, որն օգնում էր այդ երկրներին՝ շուկայական տնտեսություն կառուցելու և ժողովրդավարությունն ամրապնդելու, օրենքի գերակայությունն ապահովելու և կառավարման կարողությունները զարգացնելու գործնքացներում: TACIS ծրագիրը հիմնականում գործում էր երկողմանի համագործակցության հիման վրա:

Համագործակցության շրջանակներն են. օժանդակություն ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումների իրականացմանը, օժանդակություն մասնավոր հատվածին և աջակցություն տնտեսական զարգացման գործնքացին, օժանդակություն անցումային շրջանի սոցիալական հետևանքները հաղթահարելու նպատակով, ենթակառուցվածքների ցանցի զարգացում, բնապահպանության ապահովում և բնական ռեսուրսների կառավարում, գյուղատնտեսության զարգացում:

Բացի նշված ոլորտներից՝ ԵՄ/ԵՀՀ-ն օժանդակում է նաև ատոմային էներգետիկայի անվտանգության ուղղված նախագծերին: Ի լրումն՝ գոյություն ունեն նաև տարածաշրջանային և բազմակողմ ծրագրեր, որոնք վերաբերում են բնապահպանության, արդարադատության, ներքին գործերի հիմնահարցերին: Պետք է նշել այլ երկրների հետ համագործակցության ծրագրերը, որոնց հիմնական նպատակն է ազատ առևտությունը խոչընդոտների վերացումը, ինչպես նաև ուշադրության են արժանի միջամանային կտրվածքով բնության աղտոտման դեմ պայքարի հետ կապված համատեղ գործողությունները:

Բացի այդ, այսպես կոչված Գործնկերության և համագործակցության համաձայնագիրը (ԳՀՀ) Հայաստանի և ԵՄ-ու իր անդամ 11 պետությունների միջև կնքված համաձայնագիր է, որը բացի պաշտպանության հիմնահարցերից՝ ընդգրկում է ԵՄ-Հայաստան հարաբերությունների գրեթե ամբողջ համալիրը:

Այն ստորագրվել է 1996 թվականի ապրիլի 22-ին և ուժի մեջ մտել 1999թ. հունիսի 1-ին: Զանի որ ԳՀՀ-ն առնչվում է ԵՀ և իր անդամ 15 պետությունների իրավասության շրջանակում գտնվող խնդիրների հետ, ուստի այն պետք է վավերացվեր յուրաքանչյուր անդամ պետության կողմից անհատապես:

ԵՀ-ն Գործնկերության և համագործակցության համաձայնագրեր է ստորագրել նաև Հայաստանի հարեւանների՝ Վրաստանի և Աղրեջանի հետ: 1999թ. հունիսի 22-ին Լյուբսեմբուրգում կայացավ համաժողով ԵՄ-ւ հարավկովկասյան երեք հանրապետությունների միջև:

Համաձայնագիրը հիմք է ստեղծել քաղաքական հիմնախնդիրների, առևտություն և ներդրումների բնագավառում արդյունավետ երկխոսության համար, ինչպես նաև իր ուրույն դերն ունի՝ ամրապնդելու տարածաշրջանային համագործակցությունը, որը վտանգված է տարածաշրջանում առկա հակամարտություններով: Համաձայնագիր նպատակն է օգնել Հայաստանին և իր հարևաններին՝ Հարավային Կովկասում կապեր հաստատել՝ Եվրոպայի հետ: Այնուամենայնիվ, համաձայնագրում ընդգրկված է, որ համագործակցությունը ԵՄ-ի հետ կարող է հաջող ընթանալ միմիայն այն դեպքում, եթե հարավկովկասյան հանրապետությունները խաղաղ ճանապարհով լուծեն առկա հակամարտությունները:

2004թ. հունիսին Հայաստանը (Վրաստանի և Աղրեջանի հետ միասին) ներառվեց Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ: Եվրահանձնաժողովին առաջարկվեց հաշվետվություն ներկայացնել յուրաքանչյուր երկրի քաղաքական և տնտեսական բարեփոխումների վերաբերյալ: Եվրահանձնաժողովը պատրաստել էր հաշվետվություններ և դրանք ներկայացրել Եվրոպական խորհրդին: 2005թ. մարտին Խորհրդը հաստատեց այդ հաշվետվությունները հարավկովկասյան երեք հանրապետությունների համար: Հիշյալ հաշվետվությունները հիմք են ստեղծում այդ երկրների համար՝ Գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկություններ անելու առողմով: Հանձնաժողովը գնահատում է Հայաստանի և ԵՄ միջև երկկողմանի հարաբերությունների վիճակը, ԳՀՀ կատարման առաջընթացը, Հարևանության քաղաքականության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում առկա խնդիրները: Դրանց շարքում են՝ ժողովրդավարության վրա հիմնական քաղաքական ինստիտուտների զարգացման գործնքացը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները, տարածաշրջանային կայունությունը և արդարադատության ու ներքին գործերի բնագավառում համագործակցությունը, ինչպես նաև տնտեսական և սոցիալական բարեփոխումները, որոնք նոր հնարավորություններ կստեղծեն զարգացման և արդիականացման համար՝ ուղղված առևտություններում:

2005թ. ընթացքում ՀՀ կառավարությունն աշխատանքներ էր ծավալել Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում Գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ, և ձևավորվել էր առաջարկությունների փաթեթ:

2005թ. նոյեմբերի 28-ին Երևանում տեղի ունեցավ Գործողությունների ծրագրի առաջին քննարկումը, որին մասնակցում էին ԵՄ և Հայաստանի ներկայացուցիչները, և Գործողությունների ծրագրի հիմնական դրույթների վերաբերյալ համաձայնություն կայացվեց:

Հայաստանի հետ ԵՄ համագործակցության հիմնական բնագավառներն են. քաղաքական ինստիտուտների զարգացումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները, տարածաշրջանային կայունությունը և համագործակցությունը արդարադատության ու ներքին գործերի բնագավառում, ինչպես նաև տնտեսական և սոցիալական բարեփոխումները, առևտության զարգացման և Հայաստանի ներգրավվածությունը ԵՄ անդամ պետությունների շուկաներում:

Օժանդակությունը հիմնականում ուղղվում է. ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումներին, մասնավոր ոլորտին և տնտեսական զարգացմանը, անցումային շրջանի սոցիալական խնդիրներին, ենթակառուցվածքների ցանցի զարգացմանը, առողմային ներգետիկայի անվտանգությանը, բնապահպանության խրախումանը և բնական ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, գյուղատնտեսության զարգացմանը:

1991թ. ի վեր Հայաստանում իրականացվել են շուկայական բարեփոխումներ, որոնք հիմնականում ուղղված են եղել առևտության զարգացման և տնտեսության կայունության ու վերակառուցման հիմնախնդիրներին: Արդյունքում 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ:

Լինելով շրջափակված և բնական ռեսուրսներով ոչ հարուստ երկիր՝ Հայաստանին բաժին է ընկնում համաշխարհային առևտության մասը: Ավելին, Հայաստանի արտաքին առևտությունը ինչպես տարածաշրջային այնպես էլ ապրանքային կառուցվածքով շատ խիստ կենտրոնացված է: Մասնավորապես Հայաստանի ամենազվարկոր հիմք առևտուային գործընկերներին բաժին է ընկնում ամբողջ արտաքին առևտություն մոտ 80%:

ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտությունը ծավալները սկզբնական ժամանակաշրջանում զգալի վիճում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտությունը ծավալներին, սակայն, ի տարրերություն ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտությունը, ԵՄ հետ արտաքին առևտությունը վերջին տարիներին ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Այսպես, 1993-1998թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտություն և արտահանման, և ներմուծման ծավալները զգալի գերազանցել են ԵՄ երկրներ արտահանման և ԵՄ երկրներից ներմուծման ծավալներին:

1998թ. ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները գրեթե հավասարվել են՝ կազմելով համապատասխանարար 259,4 և 221,4 մլն. ԱՄՆ դոլար: Այնուհետև, մինչև 2002թ. զգալի կրճատվել է ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները և հակառակ դրան՝ աճել է ԵՄ երկրներից ներմուծման ծավալները: Սկսած 2002թ.՝ միաժամանակ մեծ տեսմաներով աճել են և ԱՊՀ, և ԵՄ երկրներից ներմուծման ծավալները՝ 2005թ. կազմելով համապատասխանարար 187,8 և 453,1 մլն.դոլար: Նմանատիպ օրինաշափություն առկա է նաև ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման մեջ: 1993-2002թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտությունը կրել է «պարուրած բռնույթ»: Այսինքն՝ երբ նվազել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտությունը, աճել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտությունը, իսկ երբ նվազել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտությունը, աճել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտությունը, իսկ երբ նվազել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտությունը: Եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտությունը մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտությունը ամենազվարկոր գործընկերը ԵՄ-ն է:

1993-2000թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտությունը ԵՄ երկրների հետ անընդհատ աճել է, ընդ որում, միաժամանակ աճել են և արտահանման, և ներմուծման ծավալները: Սակայն, պատկերը փոխվում է 2001թ., երբ 17,1%-ով կրճատվում է ԵՄ արտահանման ծավալը՝ կազմելով 88,6 մլն. դոլար: Այնուհետև 2002-2003թթ. ընկած ժամանակահատվածում զրեթե երկու անգամ աճում են ՀՀ արտահանման ծավալները: Նմանապես 2001թ. 16,5%-ով կրճատվել է նաև ԵՄ-ից ներմուծման ծավալը՝ կազմելով 252,2 մլն. դոլար:

2003-2005թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտահանման ծավալը աճել է 75,2%-ով, իսկ ԵՄ-ից Հայաստան ներմուծման ծավալը՝ 53,7%-ով: ԵՄ հետ արտաքին առևտության աշխատավորության մասն աշխատացումը կարելի է բացատրել այն փաստով, որ 2003թ. սկզբին Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը ԵՄ երկրների շուկաներ էլ ավելի հասանելի և շահավետ դարձեց հայկական ապրանքների համար: Սիևնոյն ժամանակ ԱՀԿ անդամակցությունը ավելի հասանելի և շահավետ դարձեց հայկական շուկան եվրոպական ապրանքների համար: Այսպիսով, ԵՄ երկրների հետ արտաքին առևտությունը ծավալների ավելացում գրանցվել է նաև մինչև ՀՀ արտահանման ԱՀԿ անդամակցությունը, իսկ ԱՀԿ անդամակցությունը լրացուցիչ արագացուցիչ հանդիսացավ այդ գործընթացի համար:

2005թ. տվյալներով ՀՀ և ԵՄ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1045,2 մլն. դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 453,1 մլն. դոլար, իսկ ներմուծումը՝ 592,1 մլն. դոլար:

ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտությունը և աշխարհագրական, և ապրանքային և կառուցվածքը, ինչպես ՀՀ ընդհանուր արտաքին առևտությունը դեպքում, նոյնպես շատ կենտրոնացված է: ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտությունը կենտրոնացումը մեկնաբանում է այն փաստը, որ ԵՄ երկրներից Հայաստանի գլխավոր առևտուային գործընկեր երկրներն են Բելգիան, որին բաժին է ընկնում ընդհանուր ապրանքաշրջանառության 27,0%, Գերմանիան (25,5%), Նիդերլանդները (13%), Իտալիան (6,7%), Ֆրանսիան (3,9%) և Հունաստանը (3,7%): Ընդհանուր առմամբ նշված երկրներին բաժին է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտությունը շուրջ 80%: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ շնայած Ֆրանսիայի հետ Հայաստանի բավական սերտ կապերին, Ֆրանսիային բաժին է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտությունը ընդհանուր 4%: Սակայն, ՀՀ կապերը Ֆրանսիայի հետ չեն սահմանափակվում միայն արտաքին առևտությունը: Այսպես, 1992-2006թթ. ընթացքում Ֆրանսիայից Հայաստան կատարվել է ավելի քան 120 մլն. դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումներ: 2006թ. հունվարի 1-ի դրույթամբ Հայաստանում գործում էին 111 ձեռնարկություններ և ընկերություններ ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ:

Ուսումնասիրելով վերը նշված երկների հետ կատարվող արտաքին առևտությունը ապրանքային կառուցվածքը՝ նկատվում է որոշ ապրանքախմբերի գծով զգալի կենտրոնացում: Այսպես, ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ արտաքին առևտությունը ապրանքային կառուցվածքում գերակշռություն են բանկարժեք քարերը, որոնք ներմուծվում են, վերամշակվում և վերարտահանվում ԵՄ (մասնավորապես՝ Բելգիա): ԵՄ-ից ամբողջ ներմուծման 22,9% և դեպի ԵՄ արտահանման 26,1% բաժին է ընկնում բանկարժեք քարերին: Հայաստանից ԵՄ արտահանվում են նաև մետաղներ, մասնավորապես սև մետաղներ, պղինձ և այլ ոչ բանկարժեք մետաղներ: Դրանք արտահանվում են հիմնականում Գերմանիայի և Նիդերլանդների, ընդ որում՝ 2005թ. մետաղների բաժինը դեպի ԵՄ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 55%: Հայաստանը ԵՄ-ից ներմուծում է հիմնականում մեթաններ և սարքավորումներ, փոխադրամիջոցներ, որոնց բաժին է ընկնում ԵՄ-ից ընդհանուր ներմուծման մոտ 1/3-ը:

ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի արտաքին առևտությունը ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի և Նիդերլանդների հետ արտաքին առևտությունը՝ բացառապես բանկարժեք քարերի գծով, իսկ Նիդերլանդների հետ արտաքին առևտությունը բացառապես մետաղների գծով: Գերմանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտությունը նկատվում է հարաբերականորեն որոշակի տարրերակավածություն (հիմնականում ներմուծման գծով):

Այսպիսով, ԵՄ գնալով դառնում է Հայաստանի համար խոշորագույն առևտրային գործընկեր: Այսպես, 2006թ. Հայաստանի համախառն արտահանման և ներմուծման մեջ ԵՄ բաժինը կազմել է համապատասխանարար 47% (472.13 մլն եվրո) և 28.3% (408.4 մլն եվրո): Ընդ որում, Հայաստանի և ԵՄ միջև առևտրի կառուցվածքի վերաբերյալ հարկ է նշել, որ Հայաստանի արտահանումը մեծ մասամբ բաղկացած է գունավոր մետաղներից, բանկարժեք բարերից, մետաղներից և տեքստիլ արտադրանքից:

ԵՄ-ից Հայաստան ներմուծումն ավելի բազմազան է. ներմուծվող հիմնական ապրանքներն են՝ բանկարժեք բարեր ու մետաղներ, սարքավորումներ, էլեկտրական ապրանքներ և այլն, ավտոտրանսպորտային միջոցներ, քիմիկատներ, սննդամբեր և ըմպելիքներ, սպիրտային խմիչքներ և ծխախոտային արտադրանք, գունավոր մետաղները և տեքստիլ արտադրանք:

Ներկայումս Հայաստանից ԵՄ իրականացվող արտահանումը օգտվում է արտոնությունների ընդհանուրացված համակարգի /ԱՀՀ/, որի շրջանակներում ԵՄ որոշ ապրանքների գծով մաքսային արտոնություններ է տրամադրում: Այս համակարգից օգտվելու համար Հայաստանի արտահանողները պետք է կատարեն ԵՄ կողմից նախանշված բոլոր պահանջները՝ մասնավորապես ծագման կանոնների վերաբերյալ: Հակառակ դեպքում Հայաստանից արտահանվող արտադրանքի վրա կիրառվեն ընդհանուր բնույթի մաքսադրություններ: Այսպիսով, ոչ բոլոր ապրանքներն են հարկվում արտոնյալ մաքսադրությներով, սակայն նպատակահարմարության համար ներադրվում է, որ Հայաստանի արտահանումը ամբողջովին ընդգրկված է ԱՀՀ-ում:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2006թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ընթացիկ գներով կազմել է 3198.3 մլն. դոլար, այդ բվում՝ ապրանքների արտահանումը՝ 1 004.0 մլն. դոլար, իսկ ներմուծումը՝ 2 194.3 մլն. դոլար: Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է՝ 1190.4 մլն. դոլար, իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված թերությունը՝ 1136.8 մլն. դոլար:

Այսպիսով, չնայած, որ ՀՀ և ԵՄ միջև հարաբերությունները գնալով զարգանում են, սակայն նրանց միջև իրականացվող արտաքին առևտուրը չի զարգանում իր հնարավոր արդյունավետությամբ: Մասնավորապես, ԵՄ հետ արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում գրեթե բացակայում են պատրաստի սպառողական ապրանքները (բացառությամբ Խոտախիայի հետ արտաքին առևտրի): Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հայկական սպառողական ապրանքները ներարկվում են գնային և որակական բարձր մրցակցության ԵՄ երկրների շուկաներում: Սակայն, ամեն դեպքում, այս սահմանափակումը կարելի է հետագայում բացառել համատեղ ծեռնարկությունների ստեղծման և ԵՄ երկրներից օտարերկրյա ներդրումների ներգրավման միջոցով: ԵՄ երկրների ծեռնարկատերերի հետ համատեղ ծեռնարկությունների ստեղծումը և օտարերկրյա ներդրումների ավելացումը թույլ կտան Հայաստանին՝ հաղթահարել առկա տեխնոլոգիական բարդությունները և արտադրել մրցունակ արտադրանք, որը կարող է սպառվել ոչ միայն ԵՄ երկրների, այլ՝ համաշխարհային շուկայում:

Արտաքին առևտրի զարգացումը ՀՀ և ԵՄ անդամ երկրների միջև ՀՀ ԵՄ անդամակցման կարևորագույն նախապայմաններից է: Այն կարևոր է ոչ միայն մինչև անդամակցումը ՀՀ տնտեսական զարգացման առումով, այլ նաև անդամակցումից հետո ՀՀ տնտեսական զարգացման համար: Նախ՝ ԵՄ ՀՀ անդամակցման անհրաժեշտ պայմաններից մեկը կիրար ՀՀ մասնակիտացած առևտրի կարևորությունը ԵՄ համար. այսինքն՝ ՀՀ-ն ԵՄ ներմուծման համար ինչ կարևոր նշանակություն կունենա, մյուս կողմից անդամակցությունից հետո, երբ եվրոպական ապրանքները մեծ ծավալներով կներմուծվեն Հայաստան, ինչպես կդիմանա այդ մրցակցությանը ՀՀ տնտեսությունը:

ԵՄ-ն այսօր մոտ 500 մլն. իր բնակչությամբ աշխարհի ամենագնողունակ և մեծ շուկան է ցանկացած տիպի արտադրանքի համար: Բացի այդ, անդամ երկրների կողմից վարվող միասնական արտաքին տնտեսական բաղաքականությունը ավելի է հեշտացնում մուտքը այս շուկա: Մյուս կողմից մասշտարի էֆեկտի արդյունքում, որը ի հայտ է գալիս միասնական շուկայի պայմաններում, այս կառույցը ամենամրցունակներից մեկն է արտահանման բնագավառում, ինչը Հայաստանի՝ նման տնտեսությամբ երկրի համար նաև լրացուցիչ խնդիրներ է առաջացնում ազգային տնտեսության մրցունակության տեսանկյունից:

Մեր կարծիքով, Հայաստան-Եվրամիություն առևտրային հարաբերությունների խթանման համար պետք է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- պետական ակտիվ քաղաքականության իրականացում, որն ուղղված կլինի Հայաստանի և հայ արտադրողի ճանաշմանը Եվրամիության շուկայում,
- պետական քաղաքականություն՝ ուղղված արտադրանքի որակի բարձրացմանը՝ համապատասխանեցնելով այն միջազգային ստանդարտներին և ԵՄ շուկայի պահանջներին,
- մաքսային և հարկային համակարգերում բարեփոխումների իրականացում,
- ներդրումների ներգրավմանն ուղղված խթանման քաղաքականության իրականացում,
- ԵՄ շուկայի մասին տեղեկատվության մատչելիության բարձրացում,
- առևտրային խոշընդուների մեղմացում,
- բեռնափոխադրման ոլորտում մրցակցության առկայություն:

Կարևոր նշանակություն ունի ԵՄ երկրների դեսպանատներում առևտրի գծով ներկայացուցիչների առկայություն և նրանց գործի ակտիվացում, ինչպես նաև ցուցահանդեսների և գործարար ֆորումների կազմակերպում: Հայ գործարարները տեղեկատվական լուրջ պակաս են գգում ԵՄ շուկայի վերաբերյալ: Այդ գործում կարևոր է էլեկտրոնային տվյալների բազայի ծևագորումը, ինչը հնարավորություն կտա ստանալ ճշգրիտ կոնկրետ տեղեկություններ ԵՄ շուկայի մասին, այնտեղ գործող ստանդարտների, որակի նկատմամբ պահանջների, արտոնությունների և այլնի վերաբերյալ:

Արտահանման խրախուսման գործում շատ կարևոր է ստեղծել հատուկ մասնագիտացված, արտահանմանը աջակցող մասնագիտացված մարմին, որի գործունեության ոլորտում առանձնակի տեղ պետք է զբաղեցնի, արտարին առևտրային հարցերը ԵՄ երկրների հետ:

Շառայությունների առևտրի, ներդրումների մրցակցության և պետական աջակցության, ապրանքային առևտրի կարգավորման և այլ կազմակերպչական կարևոր խնդիրների բարեկալման միջոցով զգալիորեն կարող է կարգավորվել Հայաստանի տնտեսական միջավայրը և խորացվել ԵՄ կառույցների հետ տնտեսական համագործակցության և ինտեգրման խնդիրները:

ԵՄ երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերի զարգացման գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև համատեղ և փոխադարձ մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, արտադրատնտեսական միջավայրը և խորացվել ԵՄ կառույցների պարբերաբար հանդիպումները, համապատասխան անհրաժեշտ տեղեկատվության փոխադարձ տրամադրումը և այլն:

Կարևոր ենք համարում նաև ԵՄ և Հայաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման համարի միջոցառումների հետազոտման հարցերը՝ առևտրային, ֆինանսատնտեսական, հարկային, մարսային և այլ բնագավառներում հնարավոր արտոնությունների տեսանկյունից, ինչը իր հերին կարող է նպաստել ՀՀ տնտեսության մեջ ԵՄ-ից ներդրումների ավելացմանը, դրանց ներգրավման և օգտագործման հիմնահարցերի բարեկալմանը: Ավելին, հաշվի առնելով ԵՄ-ում առկա առաջնարարությունների գիտատար, տեխնոլոգիատար արտադրությունների զարգացման բնագավառներում տեղայնացնել այդ փորձը ՀՀ տարածքում, ինչը, վերջին հաշվով, կնպաստի տնտեսական ինտեգրացիայի խորացմանը ԵՄ-ին:

Ինչ վերաբերում է ՀՀ ԵՄ անդամակցության խնդիրն, ապա, մեր կարծիքով, եթե Հայաստանի Հանրապետության տարեկան միջին աճի տեմպերը պահպանեն իրենց երկնիշ բնույթը, ապա համախառն ազգային արտադրանքի 1 շնչին ընկնող ցուցանիշով Հայաստանը կարող է հասնել ԵՄ միջին մակարդակին, իսկ դա նշանակում է, որ հեռանկարում Հայաստանը կարող է հավակնել ԵՄ անդամակցությանը: Սիածամանակ գերիսնդիր է մնում Հայաստանում բողարկվող ապրանքների մրցունակության բարձրացումը միջազգային շուկայում, արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացիան: Բացի այդ, հանրապետության համար կարևոր նշանակություն ունեն ֆինանսական համակարգի հետազոտման հարցերը, որոնք հնարավորություն կտան արտասահմանից եկող կայուն և մեծածավալ տրամադրությունները վերափոխենք ներդրումներից: Տնտեսական աճի հիմնական գործունը պետք է դառնա արտարին շուկան, քանի որ ներքին շուկան խստ սահմանափակ է:

Մյուս կողմից ԵՄ բաղադրականությունը Կովկասում ունի տարածաշրջանային բնույթ. այսինքն՝ ԵՄ-ն ցանկանում է իր կազմում տեսնել արդեն տնտեսապես ինտեգրված Կովկաս, և այն, որ Հայաստանը իր տնտեսական զարգացմամբ էապես տարբերվում է: Ըստ էության ԵՄ անդամակցումը մի կողմից ՀՀ համար կրացի հսկայական եվրոպական շուկան, մյուս կողմից անպաշտպան կարող է մնալ ՀՀ շուկան, որը ստիպված կլինի դիմակայել հզոր եվրոպական ֆիրմաների մրցակցությանը: Այս պարագայում ՀՀ տնտեսական օգուտները և վնասները մեծապես պայմանավորված կլինեն ՀՀ տնտեսության հետազու զարգացման տեմպերից և եվրոպական շուկայում մինչև անդամակցումը արդեն որոշ ապրանքների գծով մրցակցային առավելության առկայությունից: Այս ամենը հնարավոր է միայն ՀՀ տնտեսական ներուժի ճիշտ գնահատման և մրցակցային առավելություններ ունեցող ճյուղերի զարգացման շնորհիվ:

ՆԱՐԻՆԵ ԱՊՈՆՏ

ՀՀ ԳԱԱ Ս. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՏՈՒՐԻՉՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՉԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության (ЮНՎՏՕ) տվյալների համաձայն տուրիստական ոլորտը ծևավորում է համաշխարհային ՀՆԱ-ի 11%-ը, չնայած նրա բաժինը համաշխարհային հիմնական ֆոնդերում չի գերազանցում 7%-ը: Ոլորտում շրջանառվում է ավելի քան 4 տրիլիոն ԱՄՆ դոլար: Տուրիստական համաշխարհային շուկայի մասնակից երկրների մեկ երրորդի համար տուրիզմից ստացվող եկամուտները բյուջեի հիմնական մուտքերն են ապահովում, իսկ 80%-ից ավելի երկրներում տուրիզմից ստացվող մուտքերն ընդգրկվում են բյուջե ծևավորող հոդվածների առաջին հնայակի մեջ: Այդ ոլորտն ունի ներդրումային բարձր բազմարկիշ՝ մեկ ներդրված միավորը տնտեսության մյուս ճյուղ է շորս միավոր գումարային եկամուտ: Նման բազմարկիշային գործակից առկա է նաև բնակչության գրաղվածության ոլորտում տուրիզմում մեկ աշխատանքային տեղի ստեղծումն իր հետ բերում է տուրիստական արտադրանքի ստեղծմանը մասնակից հարակից ոլորտներում շորս աշխատանքային տեղերի ստեղծում:

Տուրիստական ծառայությունները համաշխարհային առևտրի առավել տարածված օբյեկտներից են: Տուրիստական շուկան ենթակա է տարատեսակ գործուների ազդեցության, այդ իսկ պատճառով ներքին և միջազգային տուրիստական շուկաներում նրա զարգացման որոշ միտումների բացահայտման կանխատեսումը ստեղծում է պայմաններ մարքեթինգային հարաբերությունների պլանավորման օբյեկտիվության բարձրացման համար:

Ահարեկչությունը, բնական աղետները, համաճարակների վտանգը, նավթի գների բարձրացումը, արտաքույրի կուրսի տարածումը, ինչպես նաև տնտեսական և բաղադրական անկայունությունը վերջին տարիների տուրիստական ոլորտի առջև ծառացած հիմնահարցերից մի քանիս են: Չնայած դրան ողջ աշխարհում